ՓՈՐՁԱՌԱԲԱՐ ԱՊՐԵԼ, ՎԱՅԵԼԵԼ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ (2)

Վեցերորդ հաղորդում

**Աստծու շնորհքը և համաքովանդակ Հոգին**

Գրվածքների ընթերցում. Ա Կրթ 15:10, Բ Կրթ 1:12, 15, 21-22,
3:3, 6, 8, 17-18, 12:9, 13:14

**I. Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթում Քրիստոսը՝ որպես Աստծու շնորհքը, բարի երկիրն է, ուր կարող ենք մտել, որը կարող ենք փորձառաբար ապրել, վայելել, որին կարող ենք հաղորդ լինել ու տիրել՝ Հվh 1:17, Ա Կրթ 15:10, հմմտ Գղտ 2:20, Ա Կրթ 5:7, 10:3-4, Բ Կրթ 13:14.**

Ա. Բ Կրթ 13:14-ում Տիրոջ շնորհքն առաջինն է նշվում, որովհետև այս գիրքը Քրիստոսի շնորհքի մասին է՝ 1:12, 4:15, 6:1, 8:1, 9, 9:8, 14, 12:9.

1. Սուրբ Հոգին՝ որպես Հոր սիրո հետ Քրիստոսի շնորհքի շրջանառությունը՝ փոխանցումը, մեր քրիստոնեական կյանքում և եկեղեցական կյանքում եղող մատակարարումն է.
   ա. Ամբողջ եկեղեցական կյանքը կախված է Բ Կրթ 13:14-ում ասվածից:
   բ. Մեր ներսում Աստվածային Երրորդության հոսքը, որը բացահայտված է Բ Կրթ 13:14-ում, մեր հոգևոր զարկերակն է:
2. Բ Կրթ 13:14-ում օրհնությունը նույնն է, ինչ Թվց 6:22-27-ում. սա Եռամեկ Աստծու հավիտենական օրհնությունն է, այսինքն՝ Եռամեկ Աստված, ով Իրեն Իր Աստվածային Երրորդության մեջ բաշխում է մեր մեջ մեր վայելքի համար.
   ա. «Եհովան օրհնի քեզ և պահի քեզ»-ը Հայր Աստծու՝ որպես կյանքի և լույսի ակունքի սերն է՝ խ. 24, Սղմ 36:8-9:
   բ. «Եհովան պայծառացնի Իր երեսը քեզ վրա և շնորհառատ լինի քո հանդեպ»-ը Քրիստոսի՝ որպես Աստծու տան պարարտության շնորհքն է՝ Թվց 6:25, Սղմ 36:8:
   գ. «Եհովան բարձրացնի Իր դեմքը քեզ վրա և խաղաղություն տա քեզ»-ը Սուրբ Հոգու՝ որպես Աստծու հաճույքների գետի հաղորդակցությունն է՝ Թվց 6:26, Սղմ 36:8:

Բ. Իր տնտեսության մեջ Աստծու շնորհքը հարուստ է, բազմապատկվող ու առատացող՝ Եփս 2:7, Ա Պտ 1:2բ, Բ Պտ 1:2, Եփս 1:7բ-8.

1. Աստված մեզ շնորհատրեց Սիրեցյալի մեջ՝ խ. 6:
2. Մենք հավատքով իրավունք ենք ձեռք բերել այս շնորհքի մեջ մտնելու, որի մեջ կանգնած ենք՝ Հռմ 5:2ա:
3. Երբ մենք ամեն օր ընդունում, փորձառաբար ապրում ու վայելում ենք մեր մեջ եղող Քրիստոսին, դա շնորհքն է, որն ավելանում է մեզ, շնորհք՝ շնորհքի վրա՝ Հվh 1:16:

Գ. Նոր ուխտի սպասավորների ապրելակերպը շնորհքի ապրելակերպն է՝ շնորհքի փորձառությունը՝ Եբր 12:28, Ա Կրթ 15:10, Բ Կրթ 1:12, 15.

1. Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը՝ շնորհքի Հոգին, մեր հոգու հետ է, որը վերածնվել է, որպեսզի Եռամեկ Աստծու համար բնակատեղ ու անոթ լինի՝ Եբր 10:29բ, Գղտ 6:18, Փլպ 4:23, Փլմ 25, Բ Տմթ 4:22, հմմտ 1:6-7:
2. Ամեն անգամ, երբ դառնում ենք մեր հոգուն, մտնում ենք երկնքի դարպասով ու Քրիստոսի՝ որպես երկնային սանդուղքի միջոցով դիպչում ենք շնորհքի գահին՝ Եբր 4:16, Ծնդ 28:12-17, Հվհ 1:51, Եփս 2:22:
3. Շնորհքը բոլոր նրանց հետ է, ովքեր սիրում են մեր Տեր Հիսուս Քրիստոսին անապականության մեջ՝ 6:24:
4. Խոնարհությունը մեզ փրկում է ամեն տեսակ ոչնչացումից և ճանապարհ է բացում Աստծու շնորհքի համար՝ Ա Պտ 5:5-6, Հկբ 4:6:
5. Մենք պետք է վայելենք Նրա շնորհքի խոսքը՝ Գրծ 20:32, Երմ 15:16:
6. Մենք պետք է փորձառաբար ապրենք շնորհքի և աղաչանքների Հոգուն, որը մեզ բերում է Եռամեկ Աստծու վայելքի մեջ՝ Զք 12:10ա:
7. Նոր ուխտի սպասավորները վայելում են Քրիստոսին՝ որպես իրենց համաբավարար շնորհքի, չարչարանքների միջոցով.
   ա. Նոր ուխտի սպասավորությունն առաջանում է հայտնությունից՝ գումարած չարչարանքը՝ Բ Կրթ 12:7, 1:3-4, 8-10:
   բ. Քրիստոսը՝ որպես շնորհքը, դառնում է նոր ուխտի սպասավորների վրա վրանող շնորհքը, որը նրանց հովանի է լինում նրանց տկարությունների մեջ՝ դառնալով նրանց բնակատեղը, որպեսզի սատարի, օժանդակի, պահի, պաշտպանի ու պահպանի նրանց՝ 12:9բ:
8. Մեզ անհրաժեշտ է, որ Աստծու շնորհքը Քրիստոսի մեջ կիրառվի մեր նկատմամբ՝ որպես ամրություն և ուժ մեր շարժման ու մեր պաշտպանության համար՝ Եզկ 1:6բ, 9ա, Ելց 19:4, Եսյ 40:31, Բ Կրթ 4:7, 1:12, 12:9, Ա Կրթ 15:10, Սղմ 17:8, 57:1, 63:7, 91:4:
9. Մենք կյանքում թագավորում ենք՝ շնորհքի առատություն ստանալով՝ Հռմ 5:17:
10. Մենք պետք է Աստծու տարատեսակ շնորհքի լավ տնտեսվարներ լինենք՝ Ա Պտ 4:10, Եփս 3:2:
11. Մեր խոսքը պետք է լսողներին շնորհք փոխանցի՝ Ղկս 4:22, Եփս 4:29, Եսյ 50:4:
12. Մենք պետք է եկեղեցական կյանքում վայելենք կյանքի շնորհքը, որպեսզի մեզ պահենք իսկական միասնության մեջ՝ Սղմ 133:
13. Եկեղեցական կյանքում, երբ մեզ վրա շնորհք ունենանք, եկեղեցին կկառուցվի, և շնորհքը, որը ստանում ենք, տեսանելի կլինի՝ Գրծ 4:33, 11:23:

14. Աստծու տնտեսության մեջ շնորհքի արգասիքը Քրիստոսի Մարմինն է՝ որպես Աստծու պոեմը, որն արտահայտում է Աստծու անսահման իմաստությունն ու աստվածային մտահղացումը՝ Եփս 2:10, 7, Բ Կրթ 5:17:
15. Տեր Հիսուսի շնորհքը, որը Նա բաշխում է Իր հավատացյալներին նոր-կտակարանյան դարաշրջանում, ավարտունանում է Նոր Երուսաղեմում, որտեղ պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստված կլինի շնորհքը, որը վայելելու են բոլոր հավատացյալները հավիտենապես՝ Հյտ 22:21, հմմտ 21:23, 22:1-2:

**II. Որպեսզի կազմվենք որպես նոր ուխտի սպասավորներ Քրիստոսի Մարմնի կառուցման համար, պետք է փորձառաբար ապրենք Քրիստոսի՝ որպես համաբովանդակ Հոգու բոլոր տեսանկյունները Կորնթացիներին ուղղված երկրորդ թղթում.**

Ա. Օծող Հոգին ներբնակվող, բաղադրյալ Հոգին է, որը շարժվում և գործում է մեր ներսում, որպեսզի մեր մեջ ներդնի Աստծու բոլոր աստվածային բաղադրիչներն ու տարրերը՝ 1:21, Փլպ 1:19, Ելց 30:23-25, Հռմ 10:12-13.
1. Օծության մեզ հասնելն իրագործում է Աստծու փրկության կենտրոնական նպատակը, այն է՝ օծության միջոցով մեր մեջ ներդնել բաղադրյալ Աստծուն օծությամբ, որպեսզի մենք Նրա հետ միության, միաձուլման ու ընդհանրականության մեջ մտնենք՝ Ա Կրթ 15:45բ, Ա Հվհ 2:20, 27:
2. Օծության ուսուցումը ներքին զգացումն է, որն առաջանում է մեր ներսում Հոգու շարժվելու շնորհիվ. այս զգացումը մեզ թույլ է տալիս ճանաչել Աստծու միտքը և ապրել Նրա մեջ՝ մեզ ուսուցանելով Եռամեկ Աստծուն ու Նրա գործունեությանը վերաբերող բաները՝ խ. 27, Գրծ 16:6-7:

Բ. Կնքող Հոգին աստվածային տարրերից դրոշմ է կազմում, որն արտահայտում է Աստծու պատկերը՝ Բ Կրթ 1:22, Եփս 1:13.
1. Կնքող Հոգին մշտապես հագեցնում է հավատացյալներին առ նրանց մարմնի փրկագնումը՝ 4:30.
2. Կնքող Հոգին հավատացյալներին փոխակերպում է Աստծու համար գանձի՝ որպես Նրա ժառանգության՝1:11:
3. Որքան շատ ենք մենք կնքվում, այնքան շատ ենք ձեռք բերում Աստծու պատկերը՝ կազմությամբ Աստծու գլուխգործոցը դառնալով՝ Բ Կրթ 3:18բ, Եփս 2:10:

Գ. Գրավադրող Հոգին մեզ կանխահամ է տալիս՝ որպես Աստծու լիակատար վայելքի նմուշ ու երաշխիք՝ Բ Կրթ 1:22, 5:5.
1. Հոգու գրավադրումը երաշխավորում է, որ Աստված մեր ժառանգությունն է՝ Եփս 1:14:
2. Քրիստոսը՝ որպես գրավադրող Հոգին, մեր մեջ է, որպեսզի մենք ճաշա-

կենք Նրան, վայելենք Նրան՝ որպես մեր աստվածային բաժնի, մեզ հատկացված բաժնի, մեր հոգին վարժելու միջոցով՝ Սղմ 34:8, Ա Պտ 2:3, Կղս 1:12:

Դ. Ներգրող Հոգին մեր մեջ է գրում Քրիստոսին, որպեսզի մեզ դարձնի Քրիստոսի կենդանի նամակները՝ Բ Կրթ 3:3, հմմտ Սղմ 45:1.

1. Քրիստոսը ներգրվում է մեր մեջ հոգևոր թանաքով՝ կենդանի Աստծու Հոգով. եթե մենք Հոգու ներգրելու ներքո ենք, ներքուստ կենդանի լինելու խոր զգացողություն ենք ունենում:
2. Հոգին թանաքն է, և այս թանաքի բովանդակությունը Քրիստոսն է՝ Իր անձով, աշխատանքով ու ձեռքբերումներով. բաղադրյալ Հոգին՝ որպես բաղադրյալ թանաք, Քրիստոսի էաhիմքն ավելացնում է մեր մեջ և մեզ հագեցնում Քրիստոսի էությամբ:

Ե. Կենդանարար Հոգին՝ կենդանացնող Հոգին, աստվածային կյանքը ներդնում է մեր էության մեջ՝ մեզ դարձնելով կյանքի սպասավորություն ունեցող կյանքի մարդիկ՝ Բ Կրթ 3:6, 17, Հվh 7:38.

1. Երբ աղոթքով ուսումնասիրում ու կարդում ենք Աստվածաշունչը՝ մեր հոգու վարժանքով հանդերձ, կենդանանում ենք՝ Բ Կրթ 3:6, Հվh 6:63:
2. Որպեսզի լինենք մարդիկ, որոնք կարող են ուրիշներին կյանք տալ, մենք պետք է հարակայենք աստվածային կյանքում և պետք է քայլենք, ապրենք ու գոյություն ունենանք աստվածային կյանքում՝ Ա Հվh 5:16ա:

Զ. Սպասավորող Հոգին մեր մեջ է բաշխում այն ամենը, ինչ Քրիստոսն է, և մեզ համար իրական դարձնում այն ամենը, ինչ Քրիստոսն է և ունի՝ Բ Կրթ 3:8, Հվh 16:13-15.

1. Մենք կարող ենք ստանալ սպասավորող Հոգու մատակարարումը՝ մեր հոգին աղոթքում վարժելով ու Տիրոջը կանչելով՝ Գղտ 3:5ա, Կղս 4:2, Հռմ 10:12-13:
2. Սպասավորող Հոգին մեր մեջ է սպասավորում Քրիստոսին և մեր միջոցով ուրիշների մեջ է սպասավորում Քրիստոսին՝ Բ Կրթ 3:6, հմմտ Փլպ 1:25:

Է. Ազատող Հոգին մեզ ազատում է օրենքի տառի կապանքից. Տիրոջ Հոգին Տերն Ինքն է, ով ազատություն է բերում՝ Բ Կրթ 3:17, 4:5, Գղտ 2:4, 5:1.

1. Այս ազատումը ներառում է լիակատար հագեցումը հարուստ, սատարող մատակարարման ու Քրիստոսի լիակատար վայելքի շնորհիվ՝ Հվh 4:14բ:
2. Այս ազատումը ներառում է ճշմարիտ հանգիստը վայելելը՝ ազատված լինելով օրենքը պահելու պարտականության ծանր բեռից՝ Մտթ 11:28-30:

Ը. Փոխակերպող Հոգին մեր մեջ է բաշխում աստվածային կյանքը, բնությունը, էությունն ու տարրը, այսինքն՝ բուն Աստվածային Էությունը, որպեսզի

մենք նյութափոխանակորեն փոխակերպվենք մեր ներքին էության մեջ՝ Բ Կրթ 3:18.

1. Երբ մեր սիրտը շրջում ենք Տիրոջը, որպեսզի բաց երեսով հայենք Տիրոջ փառքին ու արտացոլենք այն, Նա մեր մեջ է ներարկում այն ամենի տարրերը, ինչ Ինքն է և արել է:
2. Այսպիսով՝ մենք նյութափոխանակորեն փոխակերպվում ենք փառքի մի աստիճանից մյուսի՝ ընդունելով Նրա կյանքի ձևը՝ Նրա կյանքի զորության շնորհիվ Նրա կյանքի էությամբ հանդերձ:

Թ. Փոխանցող Հոգին մեր մեջ է փոխանցում այն ամենը, ինչ Քրիստոսն է՝ Աստծու ողջ հարստությամբ հանդերձ, մեր մասնակցության համար՝ 13:14.

1. Աստված սեր է, և այս սերը՝ որպես շնորհք, մեր մեջ է փոխանցվում Հոգով, որը Փոխանցողն է:
2. Հոգին Հոր սիրո հետ Քրիստոսի շնորհքի հաղորդակցությունը, հաղորդումը, շրջանառությունը, փոխանցումն է. Նա մեր վայելքի համար մեր էության մեջ է փոխանցում աստվածային հարստությունը:

© 2024 Living Stream Ministry